ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

27 նոյեմբերի հինգշաբթի 2025
տպագրության ԺԴ տարի

165
(3196)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵՆ ԿՇԱՐՈՒՆԱԿԻ ՕՊԵՐԱՑԻԱՆ

Երեկ տեղեկացրել էինք, որ ArmLur.am-ի տվյալներով, Հակակոռուպցիոն կոմիտեն մտել է Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պետական ինստիտուտ. կա կաշառք ստանալու գործով կալանավորված դասախոս:

Մանրամասների համար դիմել էինք Հակակոռուպցիոն կոմիտե, որտեղից, ի պատասխան, հաստատեցին տեղեկությունը՝ նշելով. «ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում քննվող քրեական վարույթի շրջանակում ձերբակալվել է Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պետական ինստիտուտի ամբիոնի վարիչը՝ կաշառք ստանալու մեղադրանքով: Եվս երկու անձ ձերբակալվել է կաշառք ստանալուն օժանդակելու եւ կաշառք տալու մեղադրանքներով: Նրանց նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդություններ են ներկայացվել դատարան, որոնք բավարարվել են»:

Ըստ մեզ հասած տվյալների՝ այսքանով իրավապահների օպերացիան չի դադարեցվի: Մոտ օրերին նախատեսվում են գործընթացներ նաեւ այլ բուհերում, սակայն օպերացիան չտապալելու համար այս պահին անուն չենք հայտնի:

Հիշեցնենք, որ 2025թ. հոկտեմբերի 17-ին Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից իրականացվող քրեական վարույթի շրջանակում ձերբակալվել էին Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր Սրբուհի Գեւորգյանը եւ պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանը:

Հակակոռուպցիոն կոմիտեի մամուլի քարտուղար Մարինա Օհանջանյանը տեղեկացրել էր, որ ռեկտորն ու պրոռեկտորը մեղադրվում են համալսարանի տարբեր աշխատակիցներից կազմված հանցավոր կազմակերպություն ստեղծելու եւ ղեկավարելու, առանձնապես խոշոր չափերով վատնում եւ խարդախություն կատարելու, ինչպես նաեւ կաշառք ստանալու համար:

Քրեական վարույթի շրջանակում ձերբակալվել էին նաեւ համալսարանի այլ աշխատակիցներ:

Արդյունքում՝ դատարանը Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր Սրբուհի Գեւորգյանի նկատմամբ կիրառել է տնային կալանք եւ որպես համակցված միջոց՝ 20 մլն դրամ գրավ:

Մանկավարժականի պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանը չի կալանավորվել:

«Ժողովուրդ» օրաթերթի հարցմանն ի պատասխան՝ Հակակոռուպցիոն կոմիտեից հայտնել էին, որ Հարությունյանի նկատմամբ կիրառվել է այլընտրանքային խափանման միջոց՝ հաշվի առնելով, որ տվել է խոստովանական ցուցմունք:

Երեկ հայտնի դարձավ, որ առողջապահության փոխնախարար Արտակ Ջումայանը ազատվելու է պաշտոնից, որը զբաղեցնում է 2021 թվականից ի վեր: Ջումայանը սովորել եւ մինչեւ 2018 թվականը աշխատել ու գործունեություն է ծավալել Մոսկվայում: Մի օր էլ Արտակ Ջումայանը եկավ Հայաստան եւ հեղափոխությունից հետո՝2019-2021 թվականներին, զբաղեցրեց ՀՀ առողջապահության նախարարության «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնի պոլիկլինիկայի վարիչի պաշտոնը, ապա 2021 թվականի սեպտեմբերին դարձավ ԱՆ փոխնախարար՝ կատարելու բարեփոխումներ մի շարք ոլորտներում՝ այդ թվում եւ գյուղական պոլիկլինիկաներում: ArmLur.am-ի տեղեկությունների համաձայն՝ Արտակ Ջումայանը կնշանակվի Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոնի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար: Իսկ ի՞նչ ունեցվածքով կհեռանա նախարարությունից Ջումայանը: Համաձայն 2024 թվականի անշարժ գույքի, եկամուտների, ծախսերի եւ շահերի հայտարարագրի՝ նախկին փոխնախարարը ունի տարբեր տարիներում ձեռք բերված 3 բնակարան: Բնակարաններից 2-ը Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում են, իսկ մյուսը՝ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքում: Բնակարանները գնվել են 2019 եւ 2021 թվականներին: 2021 թվականին գնած բնակարանը, ըստ հայտարարագրի, արժեցել է 33 մլն 51 հազար դրամ՝ գրեթե 86 հազար դոլար: Ջումայանը հայտարարագրել է 2 շարժական գույք՝ UAZ եւ Toyota մակնիշի մեքենաներ: UAZ-ը ձեռք է բերվել 2023 թվականին 480 հազար դրամով: Հայտարարագրում նշված չէր 2021 թվականին ձեռք բերված Toyota մակնիշի մեքենայի արժեքը: Արտակ Ջումայանի բանկային հաշիվների մնացորդները կազմել են 1,6 մլն դրամ, կանխիկ դրամական միջոցները՝ 315 հազար դրամ:

Շարունակությունը եւ մանրամասները՝ ArmLur.am կայքում:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՔՊ խմբակցության ներսում լարվածություն է առաջացել այն բացահայտումից հետո, որ Անդրանիկ Քոչարյանը եւս դիմել է՝ ընդգրկվելու ՔՊ-ի նախընտրական ցուցակում: Մեր աղբյուրները նշում են, որ խմբակցության մի մասի համար այս տեղեկությունը անակնկալ է եղել, քանի որ համոզված էին՝ ՔՊ վարչությունը նման երաշխիք չի տա: Սակայն պարզվել է, որ երաշխավորը ԱԺ-ում ՔՊ խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանն է: Աղբյուրների փոխանցմամբ՝ երբ ՔՊ պատգամավորները փորձել են պարզաբանում ստանալ Կոնջորյանից, վերջինս պատասխանել է, որ որպես խմբակցության ղեկավար իրավունք չունի իրեն դիմողների մեջ տարբերություն դնել ու մերժել: Ըստ «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների՝ Անդրանիկ Քոչարյանը անձամբ է այցելել Կոնջորյանին՝ 2026 թվականի ընտրությունների նախընտրական ցուցակում առաջադրվելու երաշխիք ստանալու համար: Միաժամանակ նշվում է, որ դա դեռ վերջնական քայլ չէ, քանի որ ցուցակը հետագայում «զտվելու» է, եւ քիչ հավանական է, որ Քոչարյանը կարողանա ապահովել մանդատը: Նշվում է նաեւ, որ նրա առաջադրումը լուրջ դժգոհություններ է առաջացրել խմբակցության ներսում: ArmLur.am-ի տվյալներով՝ ՔՊ խմբակցության գրեթե բոլոր պատգամավորները, բացառությամբ մեկ-երկուսի, արդեն դիմել են 2026 թվականի խորհրդարանական ընտրությունների նախընտրական ցուցակում ընդգրկվելու համար: Նախընտրական հայտերի ընդունման վերջնաժամկետը լրանում է կիրակի օրը, ինչից հետո կուսակցությունը պետք է ամփոփի նախնական ցուցակը: Մեր տեղեկություններով՝ ՔՊ ցուցակում առաջադրվելուց հրաժարվել է միայն ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Լիլիթ Կիրակոսյանը: Նա, ով խորհրդարանում է 2022 թվականից, գործընկերներին տեղեկացրել է, որ չի ցանկանում կրկին առաջադրվել եւ ցանկանում է կենտրոնանալ անձնական կյանքի վրա:



«Ժողովուրդ» օրաթերթի՝ Կառավարությանը մոտ աղբյուրների փոխանցմամբ, Նիկոլ Փաշինյանը եւ ՔՊ վարչությունը ամենօրյա ռեժիմով քննարկում են 2026 թվականի խորհրդարանական ընտրությունների հնարավոր սցենարները: Աղբյուրների հավաստմամբ՝ Փաշինյանի առաջնահերթությունը նախընտրական ցուցակի ձեւավորումն է, որը, ըստ նրանց, պետք է կազմվի յուրաքանչյուր թեկնածուի առանձին «քննությունից» եւ բարեվարքության գնահատումից հետո: Մեր տեղեկություններով՝ ցուցակի վերջնական ձեւավորումը դեռ երկար գործընթաց է լինելու, եւ միայն դրա «զտումից» հետո կորոշվեն այն անձինք, որոնց հետ Փաշինյանը պատրաստվում է դուրս գալ ընտրությունների: Իշխանական շրջանակում համոզված են, որ նոր խորհրդարանում Սահմանադրական մեծամասնություն են կազմելու, եւ ոչ մի խոչընդոտ կամ ուժ չկա, որ կկարողանա իրենց հետ մրցել:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄ Է ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ԳԱՌՆԻԿ ԴԱՆԻԵԼՅԱՆԸ

ՊՆ ՈՒՂՂԱԹԻՌՆԵՐԸ ՄԻԱՑԵԼ ԵՆ ՏԱՎՈՒՇԻ ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆԸ

Տավուշի մարզում բռնկված հրդեհը մարելու աշխատանքները շարունակվում են. փրկարարները գործում են երկու ուղղությամբ, գործի են դրվել նաեւ ՊՆ ուղղաթիռները:

Տավուշի մարզում օրեր շարունակ բռնկված հրդեհների մարումը շարունակվում է: Փրկարարները հրդեհաշիջման աշխատանքներ են իրականացնում երկու հիմնական ուղղությամբ, իսկ առավոտից նրանց օգնության են հասել նաեւ Պաշտպանության նախարարության կողմից տրամադրված ուղղաթիռները:

ԱԺ պատգամավոր, տավուշցի Գառնիկ Դանիելյանը լրագրողների հետ ունեցած ճեպազրույցում ներկայացրել է վերջին տեղեկությունները հրդեհի տարածման եւ իրավիճակի վերահսկման վերաբերյալ:

-Պարոն Դանիելյան, ինչպե՞ս է ներկայում իրավիճակը Դիլիջանում: Ո՞ր տարածքներն են վնասվել:

-Վերջին օրերին Տավուշի եւ Գեղարքունիքի մարզերում հրդեհները բավականին ակտիվ են: Ճամբարակի հատվածում կրակը բռնկվել էր մի քանի օր առաջ, եւ այնտեղ այրվել են մեծածավալ ցանքատարածություններ ու անտառներ: Այնուհետեւ կրակը տարածվել է դեպի Տավուշ: «Դիլիջան ազգային պարկի» տարածքում երեկ չորս օջախ էր գրանցվել: Մեկը՝ «Կազաչի» հանդամասում, մյուսը՝ «Լեռնային Հայաստան» հանգստյան տան վերեւի հատվածում, երրորդը՝ ոլորանների մոտ գտնվող մեծ օջախն էր, որտեղ ես ամբողջ գիշեր ներկա եմ եղել, իսկ չորրորդը՝ Սեմյոնովկա գյուղի հարակից հատվածում, որը գյուղեր, բնակավայրեր հասնելու մեծ վտանգ էր ներկայացնում:

Ամբողջ գիշեր փրկարարներն ու կամավորները անձնվիրաբար աշխատել են՝ անկախ եղանակից եւ գործի մեծ ծավալից: Նրանց աշխատանքի շնորհիվ նոյեմբերի 26-ի առավոտյան արդեն որոշ հատվածներում հաջողվել էր կանգնեցնել կրակի տարածումը: Ըստ փրկարար ծառայության ղեկավարի՝ առավոտից հրդեհաշիջման աշխատանքներին միացել են նաեւ ուղղաթիռներ: Կամավորների մեծ խմբեր եւս շարունակում են աջակցել աշխատանքներին: Գիշերվա ընթացքում որոշ պահերի թվում էր, թե կրակը գրեթե անկառավարելի է, սակայն երեկոյի դրությամբ արդեն տեսանելի առաջընթաց կար:

-Ի՞նչ տեղեկություններ կան պատճառների եւ վնասների մասին:

-Տարօրինակ է, որ հրդեհի օջախները միմյանցից զգալիորեն հեռու են եւ ուղղակի կապ չունեն: Օրինակ՝ «Կազաչի» հանդամասի եւ ոլորանների հատվածի հրդեհները նշանակալի տարածական տարբերություն ունեն: Անմեղության կանխավարկածը չխախտելով՝ չեմ ուզում այժմ հստակ գնահատականներ տալ, բայց ստեղծված իրավիճակն ինձ համար որոշակի հիմնավոր կասկածների տեղիք է տալիս: Չեմ կարծում, որ բոլոր օջախները պատահականորեն են բռնկվել: Միգուցե կա մարդկային ներգործություն՝ դիտավորություն կամ անզգույշ վերաբերմունք. դա պետք է պարզի քննությունը:

-Պարոն Դանիելյան, կա՞մ վտանգ, որ կրակը կարող է հասնել բնակավայրերին:

-Քամին, ինչպես նաեւ չոր խոտերն ու քամատապալ ծառերը նպաստում են հրդեհի արագ տարածմանը: Մենք բազմիցս ասել ենք, որ քամատապալ ծառերը պետք է տրամադրվեն գյուղացիներին՝ 8 խորանարդ մետր թափուկ վառելիքի սահմանում, ինչը պետության պարտականությունն է: Սակայն դրանց չմշակված մնալը, ինչպես նաեւ չոր խոտածածկը, մեծացնում են տարածման մասշտաբը: Կան բազմաթիվ խնդիրներ, որոնց մասին նախնական գնահատական տալն այս պահին նպատակահարմար չէ:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

«ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԾՎԵԼ Է ՀԱՇՎԵՀԱՐԴԱՐԻ ԳՈՐԾԻՔԻ»

«Այսօր իշխանությունը վերածվել է քաղաքական հետապնդումների, հալածանքների եւ հաշվեհարդարի բացահայտ գործիքի»:

Այս մասին ԱԺ-ում երեկ ասել է ԱԺ Հայաստան խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանը՝ԱԺ «Հայաստան» խմբակցության նախաձեռնությամբ՝ ԱԺ հայտարարության նախագծի քննարկման ժամանակ: Նախագիծը վերաբերում է ՀՀ-ում քաղբանտարկյալներին, նրանց իրավունքների վերականգնմանը:

«Լսումների համար հիմք են հանդիսացել ՀՀ-ում արձանագրվող ժողովրդավարության հետընթացը, որի բաղկացուցիչ մասն են կազմում խոսքի, խղճի, հավաքների, ազատությունների կոպիտ ոտնահարումները, ԶԼՄ-ների հանդեպ ճնշումները, շինծու քրեական գործերը, քաղաքական այլ հայացքներ ունեցող գործիչների եւ քաղաքացիների նկատմամբ ընտրովի դատավարությունը, որը, մենք, տեսնում ենք անարդար դատավճիռներով, աննախադեպ բանտարկյալների առկայությամբ »,- նշել է Օհանյանը:

Օհանյանի խոսքով՝ իշխող վարչախմբի գործողություններն ուղղված են երկրում վախի մթնոլորտ սերմանելուն, իշխանությունն ամեն գնով պահելուն, որոնք, վերջիվերջո, հանգեցնելու են իրավական պետության հիմքերի խաթարմանն ու սահմանադրության վերջնական տապալմանը:

Պատգամավորը նաեւ նշել է, որ կարեւորելով թեման, խմբակցությունը նախագծի շրջանակներում քննարկումներ է ունեցել «Պատիվ ունեմ» խմբակցության հետ:

«ՀՀ դատախազը, ով դատախազական շրջանակներում ամենաառաջին պատասխանատուն եւ հրավիրվածն էր այս լսումներին, ներկա չի: Լսումներին ներկա է ԱՄՆ դեսպանության քաղաքական ներկայացուցիչը»,-ասել է պատգամավորը:

ԹՐԱՄՓԸ՝ ԶԵԼԵՆՍԿՈՒ՝ ՎԱՇԻՆԳՏՈՆ ԱՅՑԻ ՄԱՍԻՆ

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը հայտարարել է, որ Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկին կցանկանար վերադառնալ Սպիտակ տուն: Սակայն նա հավելել է, որ նախ պետք է վերջնականապես կնքվի խաղաղության համաձայնագիրը: Այս մասին հաղորդում է ՐԵԿ-Ուկրաինան՝հղում անելով Սպիտակ տան հաղորդագրությանը:

Ասուլիսի ժամանակ լրագրողները Թրամփին հարցրել են, թե արդյոք նա սպասում է, որ Վլադիմիր Զելենսկին կայցելի իրեն, ինչին ԱՄՆ առաջնորդը պատասխանել է.

«Նա կցանկանար գալ, բայց կարծում եմ՝ մենք նախ պետք է ավարտենք գործարքը: Մենք լավ բանակցություններ ենք վարում: Մենք սկսել ենք Ռուսաստանի հետ բանակցություններ: Մենք առաջընթաց ենք գրանցում», - ասել է Սպիտակ տան ղեկավարը:

«ԵՐԲ ԶԵԿՈՒՅՑԸ ՉՈՒՆԻ «ԶԵԿՈՒՅՑԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ»». Դ. ՏՈՆՈՅԱՆ

ՀՀ պաշտպանության նախկին նախարար Դավիթ Տոնոյանը հայտարարություն է տարածել.

«Հայտնում եմ, որ 2020թ. սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողությունների հանգամանքների ուսումնասիրման նպատակով ստեղծված քննիչ հանձնաժողովի՝ իմ մասնակցությամբ 2023թ. օգոստոսի 1-ին եւ օգոստոսի 2-ին տեղի ունեցած նիստերի արձանագրություններին եւ հանձնաժողովի զեկույցին ծանոթանալու ու դրանց վերաբերյալ պարզաբանումներ տալու, ինչպես նաեւ դրանցում փոփոխություններ կատարելու պահանջ ներկայացնելու եւ դիրքորոշումս ամբողջությամբ հիմնավորելու նպատակով իմ կողմից ս.թ. հուլիսի 15-ին եւ հոկտեմբերի 28-ին ԱԺ նախագահին հասցեագրված դիմումներին ի պատասխան՝նոյեմբերի 13-ին ստացել եմ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղարի պատասխանը:

Դրանով ինձ փաստացի հայտնվել է, որ քննիչ հանձնաժողովի՝ Ազգային ժողովի նախագահին ուղարկված զեկույցը «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 25-րդ հոդվածով նախատեսված զեկույցի իրավական կարգավիճակ չունի, հետեւաբար՝ իմ մասնակցությամբ տեղի ունեցած նիստերի արձանագրություններին եւ հանձնաժողովի զեկույցին ծանոթանալու մասին իմ խնդրանքի կապակցությամբ կիրառելի չեն «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերը:

Նման պատասխան ստանալուց հետո դիմել եմ ինձ իրավաբանական օգնություն ցուցաբերող փաստաբանական խմբին, ստացել համապատասխան իրավախորհրդատվություն, որի հիման վրա եւ հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերը՝ ս.թ. նոյեմբերի 24-ին կրկին գրավոր դիմել եմ ԱԺ նախագահին՝ խնդրելով թույլատրել ծանոթանալ քննիչ հանձնաժողովի կողմից նախապատրաստված փաստաթղթին:

Անհրաժեշտության դեպքում պատրաստ եմ հրապարակել փաստաբանական խմբի տրամադրած պարզաբանումն ամբողջությամբ, ինչպես նաեւ ԱԺ աշխատակազմի հետ նամակագրությունը», - նշված է ՀՀ պաշտպանության նախկին նախարարի հայտարարությունում:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԲԱԳՐԱՏ ՍՐԲԱԶԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ



Սրբազան Պայքարի առաջնորդ, Հայրենիքի կալանավոր Բագրատ արք. Գալստանյանն ուղերձ է հղել խորհրդարանական լսումների մասնակիցներին, որն ԱԺ ամբիոնից կարդաց «Հայաստան» խմբակցության պատգամավոր Քրիստինե Վարդանյանը.

Ուղերձում, մասնավորապես, ասված է.

«Սիրելիներ, նախ ցանկանում եմ իմ եւ բոլոր քաղաքական, ավելի ճիշտ՝ Հայրենիքի ազատության համար բանտարկյալների անունից գնահատել, քաջալերել եւ իմ բարեմաղթանքները հղել բոլորիդ՝ կազմակերպված լսումների առիթով՝ նախաձեռնող խմբակցություններին եւ մասնակիցներին:

Ինձ համար մեկ բան չափազանց հստակ է. որ այս լսումները եւ նմանատիպ մյուս բոլոր գործողությունները ոչ թե իմ կամ մեր մասին են՝ այլ կալանավորված, շղթայված եւ թշնամական գերության մեջ գտնվող մեր Հայրենիքի, մեր պետության ազատագրության մասին, «քանզի արդարեւ, երբ Աստված Ինքն է մեզ արդարացնում, ոչ ոք չի կարող մեզ դատապարտել» (Սբ. Գրիգոր Նարեկացի): Իմ եւ մեր ազատությունը ոչ ոք չի կարող ո՛չ կաշկանդել, ո՛չ սահմանափակել, ո՛չ էլ նրանից զրկել: Ազատությունն այնտեղ է, որտեղ Աստծո Հոգին է:

Մենք գիտենք՝ ինչու ենք կալանավորված, բայց մի՞թե այլ կերպ հնարավոր էր: Ի վերջո, չարիքը պիտի պարտվի, որովհետեւ այն չի կարող պարզապես հաղթել արդարությանը, ճշմարտությանը, հաշտությանը եւ սիրուն, որոնց կարիքը մենք ունենք առավել քան երբեւէ:

Ես կոչ եմ անում բոլոր նրանց, ում համար չկա անձնական հավակնություն եւ շահեր, ձեր համատեղ սիրո եւ միության ջանքերով, համախոհ գործակցությամբ, բոլոր ԵՍ-երը մի կողմ թողնելով լծվել միայն եւ միայն մեր պետության ազատագրության գործին:

Մեր խոցոտված, արյունոտված համբուրելի Մայրը՝ մեր Հայրենիքը, հայացքը յուրաքանչյուրիս հառած սպասում է Իր երջանիկ ազատագրությանը:

Չերկնչե՛ք չարի բազմությունից եւ բազմահնար գործերից՝ այո՛, մի վախեցե՛ք, ասում եմ ձեզ՝ մի՛ վախեցեք, ոչինչ ավելի չէ, քան մեր պատիվը, անունը, ժառանգությունը, քան մեր երազներն ու իղձերը, որոնք ավելի են, քան նույնիսկ մեր կյանքը:

Կրկին անգամ մեր սերն ու քաջալերանքը ձեզ: Մեր հաղթանակն այլընտրանք չունի…

Սիրով եւ աղոթքով՝

Հայրենիքի Կալանավոր

Բագրատ արք. Գալստանյան»:

Ուղերձն ընթերցելուց հետո խորհրդարանում հնչեցին ծափահարություններ:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ԱՆՏԱՌՆԵՐԸ ՎԱՌՎՈՒՄ ԵՆ. ԻՆՉՆ Է ՊԱՏՃԱՌԸ

Դիլիջանի համայնքապետարանը խնդրում է պահպանել հանգստություն եւ խուճապի չմատնվել, սակայն հրդեհն ագահաբար խժռում է Դիլիջան ազգային պարկի բազմամյա տնկիները:

ԱԺ պատգամավոր Գառնիկ Դանիելյանը հայտնում է, որ հրդեհներ են «Կազաչի» հատվածում, Նավուր բնակավայրի մոտակայքում, Դիլիջանի ոլորաններին հարակից անտառում եւ Շիրակի մարզի Ջորաշեն բնակավայրի մոտակայքում:

Պատգամավորը հայտնել է նաեւ, որ տեւական ժամանակ է, ինչ Հայաստանի տարբեր շրջաններում լայնամասշտաբ հրդեհներ են տարածվում: Մինչ այս էլ հրդեհ էր բռնկվել Ճամբարակ-Թթուջուր հատվածում:

ՆԳՆ փրկարար ծառայությունից հայտնեցին, որ հրդեհի տարածումը դեպի տներ եւ Դիլիջանի «Լեռնային Հայաստան» առողջարան կանխվել է:

Երեկ՝ հոկտեմբերի 26-ին՝ ժամը 10:30-ի դրությամբ, Տավուշի մարզի Դիլիջան «Կազաչի» հատվածում բռնկված հրդեհը մեկուսացվել է, մյուս հատվածներում՝ Նավուր բնակավայրի մոտակայքում, Դիլիջանի ոլորաններին հարակից անտառում եւ Դիլիջանի «Լեռնային Արմենիա» հյուրանոցի մոտակայքում աշխատանքները շարունակվում են (⇨ էջ 2):

ArmLur.am-ը փորձեց կապվել նաեւ Դիլիջանի համայնքապետ Դավիթ Սարգսյանի հետ, սակայն վերջինս նշեց, որ հանդիպման է:

Սարգսյանը նոյեմբերի 25-ի երեկոյան տեսանյութ էր տարածել՝ նշելով, որ ակտիվ փրկարարական աշխատանքներ են տարվում, եւ հավելյալ ուժեր կմիանան հրդեհաշիջման աշխատանքներին: Համայնքապետը հավաստիացնում էր, թե չկա այն չափազանցված իրավիճակը, որը ներկայացվում է:

Հիշեցնենք, որ Ճամբարակ-Թթուջուր հատվածում դեռ նոյեմբերի 21-ին էր հրդեհ բռնկվել. սարալանջին այրվում էր խոտածածկ տարածք:

Դրանից հետո հրդեհ էր բռնկվել Տավուշի մարզում, եւ այժմ փրկարարները 2 ուղղությամբ հրդեհաշիջման աշխատանքներ են իրականացնում:

ArmLur.am-ի հետ զրույցում տեղի բնակիչները նշել են, որ հրդեհի տարածումը դժվար թե դիտավորությամբ պայմանավորված լինի: Նրանց խոսքով՝ հիմնական պատճառը չոր ու տաք կլիման է, ինչի օրինակ են բերում տարածաշրջանում գրանցվող այլ հրդեհների մասին լուրերը:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԿԱՐԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆԸ ՀՀ ՌԱԶՄԱԿԱՆ ԿՅՈՐԴ՝ ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՀՀ վարչապետի աշխատակազմից տեղեկացնում են, որ վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ Կարեն Մուրադյանը նշանակվել է Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունում Հայաստանի Հանրապետության ռազմական կցորդ:

«Հիմք ընդունելով «Դիվանագիտական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 9-րդ մասը՝ Կարեն Մուրադյանին 2025 թվականի դեկտեմբերի 1-ից նշանակել Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունում Հայաստանի Հանրապետության դեսպանությանը կից Հայաստանի Հանրապետության ռազմական կցորդ՝ 3 տարի ժամկետով (նստավայրը՝ ք. Լոնդոն)», - ասված է որոշման մեջ:

ՔՎԵՇԵԹԻ–ԿՈԲԻ ՄԱՅՐՈՒՂՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԸՆԹԱՑՔԸ

Վրաստան կատարած աշխատանքային այցի շրջանակներում ՀՀ ՏԿԵ նախարար Դավիթ Խուդաթյանը ՏԿԵ փոխնախարար Քրիստինե Ղալեչյանի եւ «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրեն Արկադի Չերչինյանի հետ այցելել են եւ ծանոթացել Վրաստանի խոշորագույն ենթակառուցվածքային նախագծերից մեկի՝ 23 կիլոմետրանոց Քվեշեթի-Կոբի մայրուղու եւ թունելների շինարարական աշխատանքների ընթացքին: Այս մասին հայտնում են նախարարությունից:

«Այս նախագծի շրջանակներում կառուցվում է երկշերտ ասֆալտբետոնե ճանապարհ, ինչպես նաեւ 5 կամուրջ եւ 5 թունել:

Նախագծի շրջանակներում կառուցվում է նաեւ բացառիկ կամարակապ կամուրջ, որը տարածաշրջանում ամենաբարձր կամուրջն է լինելու:

Այնուհետեւ Վրաստանի ենթակառուցվածքների նախարար Ռեւազ Սոխաձեի եւ Տարածքային զարգացման նախարար Կախաբեր Գուլեդանիի հետ այցելել եւ ծանոթացել են Ստեփանծմինդա - Գվելեթի հատվածի շինարարությանը:

Այս ճանապարհը Հյուսիս-հարավ միջանցքի մաս է կազմում:

Նախարարների, շինարարական կազմակերպությունների պատասխանատուների եւ հսկողություն իրականացնող թիմի գործընկերների հետ քննարկվել են ճանապարհների տեխնիկական մանրամասները, նախագծային լուծումները», - ասված է հաղորդագրության մեջ:

ՔՆՆԱՐԿՎՈՒՄ Է ՄԱՆԿԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԸ

Շարունակվում են երեխաների բժշկական օգնությանը վերաբերող մասնագիտական հանդիպումները: Առողջապահության նախարարությունն այս անգամ հյուրընկալել էր երեւանյան բժշկական կազմակերպությունների՝ «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոնի, «Մուրացան» համալսարանական հիվանդանոցային համալիրի, «Արաբկիր» բժշկական համալիրի, «Ուիգմոր» կանանց եւ երեխաների հիվանդանոցի ներկայացուցիչներին:

Առողջապահության նախարարի տեղակալ Արմեն Գասպարյանն առանձին աշխատանքային քննարկումներ է ունեցել ոլորտի պատասխանատուների հետ արձանագրված ցուցանիշների, առկա խնդիրների շուրջ:

Քննարկվել են նախորդ երկու տարիներին իրականացված մանկաբուժական ծառայությունների ծավալի ու որակի հետ կապված հարցերը, ներկայացվել է մանկական նեղ մասնագիտական, նորածնային, մանկական վիրաբուժական ծառայությունների ընթացքը, ինչպես նաեւ՝ այս ոլորտում ներդրվող պետական ծրագրերի արդյունավետությունը:

Արմեն Գասպարյանն ընդգծել է հիվանդանոցային, այդ թվում՝ մանկական վիրաբուժական բժշկական օգնության եւ սպասարկման որակական չափանիշների նկատմամբ հսկողության սահմանման կարեւորությունը:

Նախարար տեղակալի հանձնարարականով՝ նախատեսվում է երեխաների բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնող մարզային բժշկական կազմակերպությունները կցագրել Երեւանի 3-րդ մակարդակի բժշկական կազմակերպություններին՝ մեթոդական եւ գործնական աջակցություն ցուցաբերելու նպատակով, որը կրելու է ռոտացիոն բնույթ:

Քննարկվել է նաեւ մանկաբուժական նոր ծառայությունների ստեղծման, մասնագետների լրացուցիչ վերապատրաստումների հարցը:

Այս ձեւաչափով հանդիպումները շարունակվում են:

ԻՆՉ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ԿԱՏԱՐՎԵԼ

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵՆ ՀՖԿՍՊ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ ԷՐ

ArmLur.am-ի տեղեկությունների համաձայն՝ երեկ՝ նոյեմբերի 26-ին, Հակակոռուպցիոն կոմիտեն մտել էր Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պետական ինստիտուտ: Ըստ տեղեկությունների՝ կաշառք վերցնելու պահին դասախոսներ են ձերբակալվել:

Դիմեցինք կոմիտե, որտեղից ի պատասխան հաստատում են. «ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում քննվող քրեական վարույթի շրջանակներում ձերբակալվել է Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պետական ինստիտուտի ամբիոնի վարիչը՝ կաշառք ստանալու մեղադրանքով: Եվս երկու անձ ձերբակալվել է կաշառք ստանալուն օժանդակելու եւ կաշառք տալու մեղադրանքներով: Նրանց նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդություններ են ներկայացվել դատարան, որոնք բավարարվել են»:

Մեզ հայտնի է դարձել, թե Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պետական ինստիտուտի (ՀՖԿՍՊԻ) կոնկրետ որ ամբիոն է մտել Հակակոռուպցիոն կոմիտեն, եւ թե մասնավորապես որ ամբիոնի վարիչն է ձերբակալված:

ArշLur.aշ-ը տեղեկացավ, որ գործողությունները, մասնավորապես, կատարվել են Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պետական ինստիտուտի՝ սպորտային տուրիզմի եւ փրկարարական գործի ամբիոնում, եւ ձերբակալվել է ամբիոնի վարիչը:

Հիշեցնենք, որ հոկտեմբերի 17-ին, Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից իրականացվող նմանատիպ քրեական վարույթի շրջանակում ձերբակալվել էին Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտորը եւ պրոռեկտորը: Վերջիններս մեղադրվում էին համալսարանի տարբեր աշխատակիցներից կազմված հանցավոր կազմակերպություն ստեղծելու եւ ղեկավարելու, առանձնապես խոշոր չափերով վատնում եւ խարդախություն կատարելու, ինչպես նաեւ կաշառք ստանալու համար: Քրեական վարույթի շրջանակում ձերբակալվել էին նաեւ համալսարանի մի շարք այլ աշխատակիցներ: Հայտնել էինք նաեւ, որ արդեն նախկին ռեկտոր Սրբուհի Գեւորգյանի նկատմամբ կիրառվել է տնային կալանք եւ 20 մլն դրամի չափով գրավ: Հիշեցնենք՝ Գեւորգյանը նախարար Ժաննա Անդրեասյանի մտերիմ ընկերուհին է ու նրա վստահությամբ էր ռեկտոր նշանակվել:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԲԱՑ ՆԱՄԱԿ՝ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻՆ

«Բաց նամակ՝ Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպան տիկին Անահիտ Մանասյանին.

Հայաստան Սեւան քաղաքի բնակիչ ՀՀ քաղաքացի Նարեկ Սմբատի Սողոմոնյանից Հայտնում եմ Ձեզ, որ 2018 թվականի մարտի 31-ից առ այսօր իմ նկատմամբ իրականացվել են տարբեր տեսակի հանցագործություններ, որի վերաբերյալ ներկայացրել եմ դիմում բողոքներ ՀՀ-ի տարբեր իրավական կառույցներին առերեւույթ եւ անհերքելի կատարված հանցագործությունների վերաբերյալ, հիմնականում իրավական կառույցներում զբաղեցրած բարձր պաշտոնյաների կողմից նախապես ծրագրավորված եւ իրագործված տարբեր տեսակի հանցագործությունների վերաբերյալ: Այն, որ 2023 թվականին իմ՝ Նարեկ Սմբատի Սողոմոնյանիս նկատմամբ հարուցվել է շինծու քրեական գործ, մինչդեռ, ըստ քրեական գործում արձանագրված բովանդակության, փաստված է, որ այդ քրեական գործում տուժող ճանաչված Դավիթ Արայիկի Մուրադխանյանը գողացել է ինձ պատկանող կախազարդը, որից հետո ապակյա գնդով հարվածել է գլխիս եւ հնչեցրել հայհոյանքներ: Սակայն անցել է շուրջ 22 տարի եւ չկա այնպիսի ապացույց, որ Դավիթ Մուրադխանյանը ենթարկվել է պատասխանատվության, չկա որեւէ իրավական գնահատական նրա կողմից կատարված արարքների վերաբերյալ տվյալ վարույթում հանրային մեղադրող Պետրոս Պետրոսյանի կողմից կամ քննիչների կողմից: Այլ, ընդհակառակը, Դավիթ Մուրադխանյանի վարքագծից դրդված, նրա հակաօրինական եւ հակաբարոյական վարքի դրսեւորումից հետո, եւ ելնելով բարոյական անհամաձայնությունից, իմ կողմից Դավիթ Մուրադխանյանին հակադարձ հարված հասցնելը եւ արնահոսությամբ մարմնական վնասվածք նրան պատճառելը կոռումպացված իրավապահ մարմինների համար շարժառիթ է դառնում իրավաբանական կեղծիքով ոչ իրավաչափ եւ սխալ քրեական գնահատական տալու:

Արդյունքում՝ իմ նկատմամբ մեղադրանք է ներկայացվում, որը ենթադրում է 3-4 տարվա ազատազրկում: Սա էլ առիթ է ստեղծում դատախազ Պետրոս Պետրոսյանի համար մեզնից շորթել 7 հազար դոլար, ինձ համար կեղծել բժշկական փաստաթղթեր, որի միջոցով հնարավոր եղավ ինձ ազատել կեղծ մեղադրանքից: Սույն բաց նամակը գրված է իմ՝ Նարեկ Սմբատի Սողոմոնյանիս կողմից, էլեկտրոնային նամակի տեսքով, «Ժողովուրդ» օրաթերթին փոխանցելու նպատակով եւ, վստահելով «Ժողովուրդ» օրաթերթի անաչառությունը, խնդրում եմ, որ սույն դիմում-նամակս հրապարակվի»:

Ինչպես հայտնում է Նարեկ Սողոմոնյանը՝ ինքն այս պահին գտնվում է Սեւանի հոգեբուժարանում, որտեղ իրեն առավել անվտանգ է զգում: Ինչպես նա է հայտնում՝ նշված անձանց կողմից բռնության է ենթարկվել ոչ միայն ինքը, այլեւ իր եղբայրը եւ իր մայրը: Բռնություն կիրառող անձը, քաղաքացու խոսքով, մնացել է անպատիժ եւ շարունակում է սպառնալ իրեն ու իր ընտանիքին:

ԹՄՐԱՆՅՈՒԹ Է ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ

Համայնքային ոստիկանության Թումանյանի բաժնում ստացվել էր տեղեկություն, որ Ալավերդի քաղաքի բնակիչ 59-ամյա տղամարդը պահում եւ օգտագործում է մարիխուանա:

Նոյեմբերի 21-ին Ալավերդի-Վանաձոր ավտոճանապարհին գտնվող իր այգում տղամարդը ձերբակալվել եւ տեղափոխվել էր բաժին: Նրա խուզարկությամբ հայտնաբերվել էր դեղնականաչավուն զանգվածով կաթուցիչ եւ թղթի մեջ փաթաթված մոտ հինգ գրամ կանեփանման զանգված:

Կազմված փաստաթղթերը ներկայացվել են Թումանյանի քննչական բաժին:

Նոյեմբերի 24-ին կատարված խուզարկությամբ տղամարդու այգում գտնվող տնակում եւ օժանդակ շինություններում հայտնաբերվել է ընդհանուր մոտ 60 գրամ մարիխուանայի նմանվող զանգված:

Նախաքննությունը շարունակվում է:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՏԱՆԸ ՊԱՀԵԼ Է ՄԱՐԻԽՈՒԱՆԱ

Համայնքային ոստիկանության Արմավիրի բաժնում ստացվել էր օպերատիվ տեղեկություն, որ Ալաշկերտ գյուղի բնակիչ 41-ամյա տղամարդը տանը պահում է կանեփից պատրաստած թմրամիջոց:

Նոյեմբերի 24-ին ոստիկաններն այցելել են Ալաշկերտ, ժամը 12:42-ին ձերբակալել եւ բաժին են տեղափոխել մի տղամարդու: Իրականացվել է դեպքի վայրի պահպանություն:

Խուզարկությամբ հայտնաբերել են, որ տղամարդն ունի թղթի երեք փաթեթ եւ կաթուցիչ՝ լցված մարիխուանայի նմանվող զանգվածներով:

Արմավիրի մարզային քննչական վարչությունում նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում կատարված զննությամբ տղամարդու տան բակում հայտնաբերվել է արկղ, որի մեջ կար մոտ 75 գրամ քաշով մարիխուանայի նմանվող զանգված եւ 13 գրամ կշռող նույն զանգվածով ապակե տարա:

Նախաքննությունը շարունակվում է:

ՕՊԵՐԱՏԻՎ ԻՐԱՎԻՃԱԿ

Նոյեմբերի 25-ից 26-ը հանրապետությունում բացահայտվել է 160 հանցագործություն, որոնցից 3-ը՝ նախկինում կատարված:

Մասնավորապես՝

-61 դեպք՝ տրանսպորտային միջոց վարելու իրավունքից զրկված կամ այդ իրավունքը կասեցված կամ այդ իրավունքը չունեցող անձի կողմից տրանսպորտային միջոց վարելու,

-17 դեպք՝ թմրանյութի հայտնաբերման,

-10 դեպք՝ փաստաթուղթ կեղծելու,

-9 դեպք՝ ֆիզիկական ներգործության,

-8 դեպք՝ հոգեկան ներգործության,

-7 դեպք՝ աշխատանքի պաշտպանության կամ անվտանգության կանոնները խախտելու,

-4-ական դեպք՝ մարմնական վնասվածք պատճառելու, խարդախության, ծառերը, թփերը ապօրինի հատելու,

-3 դեպք՝ անձնական ունեցվածքի գողության,

-2-ական դեպք՝ կողոպուտի, վստահված գույքի հափշտակման, գույքը ոչնչացնելու կամ վնասելու, զենք-զինամթերքի առգրավման, բուժաշխատողի կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելու:

Բացահայտվել է կաշառակերության, իրացման նպատակով կեղծ ալկոհոլային խմիչքների եւ այլ արտադրանքի շրջանառության, պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի ինքնակամ զավթման, ինչպես նաեւ շենքերի կամ շինությունների ինքնակամ կառուցումը կասեցնելու կամ անձին պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ օրենքով սահմանված կարգով միջոցներ չձեռնարկելու, հողը փչացնելու, սառը զենքի հայտնաբերման եւ այլ դեպքեր:

Նախկինում կատարված հանցագործություններից բացահայտվել է՝ 3 դեպք՝ բնակարանային գողության:

Հայտնաբերվել է 7 հետախուզվող, կամավոր ներկայացել է 3-ը:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ նոյեմբերի 25-ից 26-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 160 դեպք, որից 3-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՊԱՐՏՔԵՐ

Նոյեմբերի 19-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում ենք ուղարկել՝նրան առաջադրելով հետեւյալ հարցը. «Տավուշի մարզպետարանի որոշ պաշտոնյաներ գույքահարկի ժամկետանց պարտավորություններ ունեն: Մարզպետի աշխատակազմում պարբերաբար խորհրդակցություններ, քննարկումներ եք ունենում համայնքների սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշների վերաբերյալ, իսկ մարզպետի աշխատակազմի պաշտոնյաները գույքահարկի մեծ պարտքեր ունեն: Նոյեմբերի 19-ի դրությամբ մարզպետի աշխատակազմի քանի՞ պաշտոնյաներ գույքահարկի ժամկետանց պարտավորություն ունեն»: Տավուշի մարզպետի աշխատակազմից ստացված պատասխանում նշված է. «հարցի վերաբերյալ առաջարկում ենք դիմել համայնքապետարաններին, քանի որ մարզպետի աշխատակազմը համապատասխան հաշվառում չի իրականացնում, եւ ֆիզիկական անձինք, այդ թվում մարզպետի աշխատակազմի աշխատակիցները, կարող են սեփականություն ունենալ տարբեր համայնքներում»: Տավուշի մարզպետի աշխատակազմի բոլոր պաշտոնյաները Իջեւան համայնքի բնակիչներ են, ուստի նրանց պատկանող գույքի բացարձակ մեծամասնությունը գտնվում է Իջեւան համայնքում, այդ պաշտոնյաները Իջեւանի համայնքապետարանում են կատարում գույքահարկի վճարումները: Այս մասին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը չի կարող չիմանալ: Նա, փոխանակ մեր հարցին պատասխաներ, փորձել է խույս տալ դրանից: Մարզպետ Ղալումյանը չի ժխտել, որ Տավուշի մարզպետարանի որոշ պաշտոնյաներ, ովքեր պետական բյուջեից բարձր աշխատավարձ, պարբերաբար դրամական մեծ պարգեւատրումներ են ստանում, իրենց հարկային պարտավորությունները հայրենի Իջեւան համայնքի հանդեպ վատ են կատարում: Էլ ինչո՞ւ է մարզպետ Հ. Ղալումյանը մարզային խորհրդի նիստում, մարզպետարանում անցկացվող աշխատանքային խորհրդակցություններում քննարկում սեփական եկամուտների հավաքագրման վառ ցուցանիշներ ունեցող համայնքների հարցը, եթե իրեն ենթակա պաշտոնյաները բարեխիղճ կերպով չեն կատարում հայրենի համայնքի հանդեպ իրենց հարկային պարտավորությունները:

ՉԵՆ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ ՕԳՏՎԵԼ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻՑ

Նոյեմբերյան համայնքի սահմանամերձ, հեռավոր Բարեկամավան, Իջեւան համայնքի Բերքաբեր, Կիրանց եւ Աճարկուտ բնակավայրեր բնական գազ է մտել, այդ գյուղերը համարվում են գազիֆիկացված, սակայն այդ գյուղերում ոչ ոք ապահովված չէ բնական գազով: Բարեկամավան գյուղից ճշտեցինք, որ 2015 թ. գյուղ բնական գազ է մտել, իսկ 2024 թ. «Վարդանյան» բարեգործական հիմնադրամի ֆինանսավորմամբ Բարեկամավանի առանձնատներից ավելի քան 60-ը գազիֆիկացվել է. հիմնադրամը տրամադրել է գազատարից դեպի այդ տներ գազի ճյուղավորումներ անցկացնելու համար պահանջվող գումարը, սակայն 60-ից ավելի տները բնական գազից ցայսօր չեն կարողանում օգտվել, գազամատակարարում չի իրականացվում:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

«ԱԿԲԱ» ԲԱՆԿ ԵՎ ՊՐՈՊԱՐԿՈ

ԱՄՓՈՓԵԼ ԵՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵԿԱՄՅԱԿԸ

«Ակբա» բանկն ու Ֆրանսիական զարգացման գործակալության անդամ Պրոպարկոն ամփոփել են համագործակցության մեկամյակը: Մեկ տարի առաջ Պրոպարկոն դարձավ «Ակբա» բանկի բաժնետեր՝ 10% մասնաբաժնով:

«Մենք երկար պատմության սկզբում ենք, որն արդեն հաջողություն է գրանցել: Այս գործարքը ամրապնդում է հայ-ֆրանսիական հարաբերությունները: Բանկը սերտ կապ ունի Ֆրանսիայի հետ, ինչը համակարգային նշանակություն ունի ֆինանսական շուկայում: Այս գործակցությունը հայկական բանկային ոլորտը կապում է եվրոպական ստանդարտներին: «Ակբան» նորարարությունների բանկն է եւ Հայաստանի համար նոր հնարավորություններ է բացում դեպի աշխարհ»,- նշել է ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպան Օլիվիե Դըկոտինյին:

«Պրոպարկոյի կողմից «Ակբա» բանկի 10% բաժնետոմսերի ձեռքբերումը ուղղակի ֆինանսական ներդրում չէ: Սա վստահության քվե է «Ակբա» բանկի ռազմավարության, կառավարման եւ Հայաստանի զարգացման մեջ նշանակալի դեր կատարելու Ակբայի կարողությանը: Պրոպարկոյի հետ համագործակցությամբ «Ակբան» մտնում է նոր ռազմավարական ցիկլ եւ այս երկարաժամկետ տեսլականի հիմքում ընկած է ամենակարեւորը՝ վստահությունը: Մեր նպատակն է լինել ոչ միայն ֆինանսական ուժեղ հաստատություն, այլեւ Հայաստանի ամենահուսալի կազմակերպություններից մեկը՝ բանկ, որը մարմնավորում է եվրոպական չափանիշները, հայկական արժեքները եւ հասարակության նկատմամբ բարձր պատասխանատվության զգացումը»,- նշել է «Ակբա» բանկի խորհրդի նախագահ Ռաֆայել Սարգսյանը:

««Ակբան» միջազգային կազմակերպությունների հետ աշխատելու բավականին հարուստ փորձ ունի: Պետք է ասել, որ այդ փորձառությունը մեզ տվել է ոչ միայն ֆինանսական հնարավորություններ, այլեւ նոր որակներ ու նոր ստանդարտներ: Պրոպարկոյի հետ համագործակցությունը մեր առջեւ նոր հորիզոններ է բացել: Հպարտ եմ, որ մենք Պրոպարկոյի գործընկերների մեծ ընտանիքում արդեն մեր ուրույն տեղն ունենք: Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել նաեւ Ֆրանսիայի կառավարությանը՝ ի դեմս պարոն դեսպանի»,- նշել է «Ակբա» բանկի գլխավոր գործադիր տնօրեն Հակոբ Անդրեասյանը:

««Ակբան» համակարգային կառույց է, որը դարձել է Հայաստանի տնտեսության զարգացման առանցքային դերակատարներից մեկը: Այս հարաբերությունները խարսխված են փոխվստահության վրա, որը կդիմադրի ցանկացած խոչընդոտի եւ երկարատեւ կյանք կունենա: Մենք աջակցելու ենք բանկի՝ միջազգային շուկա մուտք գործելուն եւ այդ ճանապարհի ընթացքում միասին ենք քայլելու: Ցանկություն ունենք խորացնել մեր համագործակցությունը եւ աջակցել, որ բանկը զարգացնի նաեւ կլիմայական փոփոխությունների ծրագիրը»,- նշել է Պրոպարկոյի Մասնավոր կապիտալի գծով տնօրենի տեղակալ Ստեֆան Ֆրուասարդեյը:

«Կենտրոնական բանկը ողջունում է, որ օտարերկրյա հեղինակավոր կազմակերպությունները մասնակցում են Հայաստանի ֆինանսական համակարգի գործունեությանը: «Ակբա» բանկը բաց բաժնետիրական ընկերություն դառնալով, ինչպես նաեւ Պրոպարկոյի հետ համագործակցության շնորհիվ, ակնհայտորեն թիրախավորում է իրեն որպես երկարաժամկետ, կայուն զարգացմանը միտված բանկ: «Ակբա» բանկը դրական իմաստով առանձնանում է լավագույն բանկերի շարքում»,- նշել է ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Հովհաննես Խաչատրյանը:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ»

ԲԱՆԿԸ ՎԶԵԲ-Ի ՀԵՏ ԿՆՔԵԼ Է ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Ս. թ. նոյեմբերի 26-ին «Արդշինբանկը» եւ ՎԶԵԲ-ը նոր համագործակցության շրջանակներում ստորագրեցին թվով 3 պայմանագիր՝ ընդհանուր ավելի քան 155 միլիոն ԱՄՆ դոլարին համարժեք ֆինանսավորման չափով՝ ուղղված երկրում միկրո, փոքր եւ միջին ձեռնարկությունների վարկավորմանը, կանաչ տնտեսության ֆինանսավորման ընդլայնմանը եւ ենթակառուցվածքների զարգացմանը:

Այս ֆինանսավորմամբ «EU4Business-EBRD» վարկային գծի շրջանակում «Արդշինբանկը» կդառնա Հայաստանի առաջին բանկը, որը կստանա հատուկ նպատակային վարկ՝ ուղղված բացառապես տեղահանված անձանց տնտեսական ինտեգրմանը: Վարկը նպատակ ունի կատարելագործել ֆինանսական հասանելիությունը տեղական ՄՓՁ-ների համար, որոնք պատկանում են փախստականներին կամ ստեղծում են աշխատատեղեր փախստականների համար: Ծրագիրը ներառում է նաեւ վարկի գումարի մինչեւ 35%-ի չափով հետվճարի (cashback) դրամաշնորհ՝ ճկուն եւ հասանելի պայմաններով:

Միանալով ՎԶԵԲ-ի Կանաչ տնտեսության ֆինանսավորման (GEFF) ծրագրին՝ բանկը ստացված միջոցները կուղղի տնտեսության ամենաարդի ոլորտներից մեկի՝ Կանաչ տնտեսության ֆինանսավորմանը՝ միտված կլիմայական փոփոխությունների մարտահրավերների նվազեցմանը, ինչպես նաեւ Հայաստանում ժամանակակից եւ էներգաարդյունավետ նախագծերի իրականացմանը: Այս ծրագրի շրջանակում վարկառուները եւս կօգտվեն դրամաշնորհի հնարավորությունից:

«ՎԶԵԲ-ի հետ մեր ամուր, երկարամյա համագործացությունը վկայում է տնտեսության կարեւորագույն ոլորտների զարգացմանը՝միտված ռազմավարական ընդհանուր տեսլականի եւ փոխվստահության մասին: Այս վարկային միջոցները կնպաստեն բանկի ֆինանսական ծառայությունների մրցունակության բարձրացմանը, ինչպես նաեւ մեր հաճախորդների աճող եւ փոփոխվող պահանջներին համահունչ դիրքավորմանը», - իր խոսքում նշեց Արդշինբանկի Վարչության նախագահ Արտակ Անանյանը:

ՎԶԵԲ-ի Հայաստանի գրասենյակի ղեկավար Ջորջ Ախալկացին մեջբերեց. «Արդշինբանկի հետ այս նոր ֆինանսավորումը Հայաստանի ՄՓՄՁ-ներին մեր երկարամյա աջակցության շարունակությունն է՝ուղղված նոր ներդրումների աճին եւ արդիականացմանը: Նաեւ առաջին անգամ է նախատեսվում բացառապես փախստականներին նպատակային աջակցություն նախատեսող բաղադրիչը, որը հնարավորություն է տալու տեղահանված անձանց եւ իրենց կազմակերպություններին օգտվել ճկուն հնարավորություններից՝նպաստելով առավել կայուն եւ ներառական մասնավոր հատվածի ձեւավորմանը»:

Հայաստանում Եվրամիության դեսպան Վասիլիս Մարագոսը, նշեց. ««Արդշինբանկի» եւ ՎԶԵԲ-ի հետ այս համագործակցության միջոցով ԵՄ-ն վերահաստատում է Հայաստանի կայուն եւ ներառական զարգացմանն ուղղված իր առաքելությունը: Այս ֆինանսական փաթեթը կարեւոր է հայկական բիզնեսի մրցունակության բարձրացման եւ բոլոր քաղաքացիների համար հավասար պայմանների ստեղծման տեսանկյունից»:

«Արդշինբանկը» ՎԶԵԲ-ի երկարամյա գործընկերն է: Բանկը ֆինանսական համակարգի առաջատարի դիրքով, մասնաճյուղային ամենամեծ ցանցով եւ մոտ 580,000 հաճախորդների բազայով շարունակում է իրականացնել կարեւորագույն դերակատարում՝ մասնավոր հատվածի զարգացման գործում:

Արդշինբանկը Հայաստանի միակ ընկերությունն է, որն ունի աշխարհի երեք առաջատար՝ Standard & Poor's (BB- (Stable)), Moody's (Ba3 (Stable)) եւ Fitch (BB- (Stable)) վարկանիշային ընկերությունների կողմից շնորհված վարկանիշեր:

Բանկն ունի Հայաստանի Հանրապետության վարկանիշային մակարդակին հավասար վարկանիշ, ինչը մասնավոր կազմակերպության վարկանիշի գնահատման հնարավոր լավագույն ցուցանիշն է:

Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 14 պատահար, 31 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՖԱՍԹ» ԲԱՆԿԸ ՆՈՐ ՆՈՐՔՈՒՄ ԲԱՑԵԼ Է ՆՈՐ՝ 38-ՐԴ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԸ

«Ֆասթ» բանկը Երեւանի Նոր Նորք վարչական շրջանի Գայի պողոտա 19/10 հասցեում բացել է իր նոր՝ 38-րդ մասնաճյուղը: Թվային նորարարություններով զինված նորաբաց մասնաճյուղը մատուցում է ամբողջական բանկային ծառայություններ թե՛ իրավաբանական, թե՛ ֆիզիկական անձանց, իսկ բանկի անձնակազմը պատրաստ է հաճախորդներին տրամադրել բարձրակարգ խորհրդատվություն:

«Ֆասթ» բանկի զարգացման տնօրեն Արմինե Տեր-Հովսեփյանը նշել է. «Մասնաճյուղն ունիվերսալ է, հիմնական նպատակներից է նաեւ հասարակության ֆինանսական կրթումը: Այստեղ մենք նպատակ ունենք հաճախորդներին ծանոթացնելու ժամանակակից բանկային ծառայությունների եւ պրոդուկտների հետ, ինչպես նաեւ ներկայացնելու դիջիթալ բենքինգի հնարավորությունները եւ առավելությունները»:

Նորաբաց մասնաճյուղում հաճախորդները հնարավորություն ունեն օգտվել «Ֆասթ» բանկի ամբողջական ծառայությունների փաթեթից՝ հաշիվների վարումից մինչեւ վարկային եւ ավանդային ծրագրեր: Մասնաճյուղը համալրված է նաեւ թվային լուծումներով, որոնք հնարավորություն են տալիս արագ եւ արդյունավետ կազմակերպել ֆինանսական գործարքները:

«Ֆասթ» բանկը վերջին շրջանում վերաբրենդավորել է մասնաճյուղերը՝ միաժամանակ բացելով նորերը: Նոր՝ 38-րդ սրահի բացումը եւս մեկ անգամ ընդգծում է բանկի հետեւողական ռազմավարությունը՝ լինել առավել մոտ հաճախորդներին եւ ընդլայնել մատչելիությունը:

«Ֆասթ» բանկը թվային բանկ դառնալուն միտված ընկերություն է, որը 24/7 գրաֆիկով ներկայացված է Երեւանում եւ Հայաստանի բոլոր մարզերում:

«Ֆասթ» բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտնում ենք, որ «Ժողովուրդ» օրաթերթի 18.06.2025թ. թիվ 80 (3111) համարի 7-րդ էջում տպագրված «Հրապարակային ծանուցման» մեջ նշված՝ «Բի էս Թի» ՍՊԸ-ի կողմից կազմակերպված, «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ -ին սեփականության իրավունքով պատկանող ներքոնշյալ անշարժ գույքերի աճուրդի փուլերը շարունակվելու են որպես մեկ միասնական համալիր 01.12.2025թ.-ին, ժ. 12:00-ին հոլանդական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ 680000000 ՀՀ դրամ մեկնարկային գնով: Աճուրդի ավարտը՝ 30.12.2026թ.:

- Կոտայքի մարզ, համայնք Նոր Գեղի, Ֆ. Թեւոսյան փողոց, 221/23 հասցեում գտնվող 1643,9 քմ անասնաշենք, 1634,9 քմ անասնաշենք, 1643,9 քմ անասնաշենք, 1643,9 քմ անասնաշենք, 1643,9 քմ անասնաշենք, 1643,9 քմ անասնաշենք, 1643,9 քմ անասնաշենք, 130 քմ պահեստ, 45,1 քմ պահեստ եւ 1,59427 հա հողամաս: Մեկնարկային գինը՝ 396000000 ՀՀ դրամ:

- Կոտայքի մարզ, համայնք Նոր Գեղի, Ֆ. Թեւոսյան փողոց, թիվ 221/18 հասցեում գտնվող 33,1 քմ ենթակայան, 38,2 քմ գրասենյակ, 1410 քմ արտադրամաս, 295,7 քմ անգար, 686,4 քմ պահեստ, 2091,5 քմ արհեստանոց, 1445,2 քմ վարչական շենք, 693,3 քմ ճաշարան, 16,3 քմ պահակատուն, 297,8 քմ պահեստ, 55,1 քմ ինքնակամ կառուցված պահեստ եւ 1,08343 հա հողամաս: Մեկնարկային գինը՝ 284000000 ՀՀ դրամ:

«Հրապարակային ծանուցման» մյուս դրույթները մնում են անփոփոխ:

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՈՒ ԲՆՈՒՅԹՈՎ՝ ԷՆԵՐԳԵՏԻԿ

ԻՆՉՊԵՍ ԱՆՈՒՇԸ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՀԱՆԴԵՊ ՄԵՐԸ ՎԵՐԱՃԵՑ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ

Հաճոյախոսություններ, հիացմունքի «wow»-ներ, թեյավճարներ. տիկին Անուշը, որպես կանոն, այսպես է ավարտում աշխատանքային օրը:

«Պատահական մարդիկ, վարորդները, երբ ինձ տեսնում են ղեկին, ժպտում են, հիացած ծափահարում: Ուղեւորներից ոմանք ասում են՝ ինչ գեղեցիկ ձայն ունեք, ձեր մեքենայի աուրան ձեզ նման գեղեցիկ է: Շա՛տ կոմպլիմենտներ եմ ստանում, դա ինձ իսկապես ուրախացնում է»,- ասում է Անուշը, ով արդեն 5 տարի համագործակցում է Yandex Go-ի հետ:

Անուշը վարել սկսել է 10 տարեկանից՝ իհարկե, իրենց տնամերձ տարածքում: Այժմ Premier սակագնի ուղեւորություններ է կատարում Երեւանում: «Ultima Premier» պրեմիում ծառայությանը, ի դեպ, կարող են միանալ միայն բարձր վարկանիշ ունեցող վարորդները, որոնք անցել են խիստ ընտրության փուլ, այդ թվում՝ առցանց թեստավորում եւ քննություն:

Տիկին Անուշը խստորեն հետեւում է բոլոր մանրուքներին. բիզնես դրես կոդը երբեք չի խախտում: Իսկ մեքենայում անթերի մաքրություն ու կարգուկանոն է. ուղեւորները կարող են լիցքավորել հեռախոսը, միացնել իրենց սիրելի երաժշտությունը, կարգավորել սրահի ջերմաստիճանը: Նաեւ անձեռոցիկ ու ջուր կա սրահում:

Ժպտերես վարորդը պատմում է, որ սերը դեպի մեքենա մանկությունից է եկել: «Շատ եմ սիրել, որովհետեւ ծնվել ու մեծացել եմ մեքենայում: Այսինքն՝ հայրս միշտ մեքենա է ունեցել»,-ասում է նա՝ հիշելով, թե ինչպես էր վաղ դպրոցական տարիքից հայրիկին խնդրում, որ նստի ղեկին:

«Երբ դարձա 10 տարեկան, նա ինձ թույլ տվեց վարել: Հիշում եմ՝ հատուկ կոշիկ էր պատվիրել կոշկակարին, որ ոտքս հասներ մեքենայի ոտնակին: Նաեւ բարձ էր հարմարեցրել նստատեղին»,- պատմում է Անուշը՝ նշելով, որ այսօր պարզապես չի պատկերացնում կյանքն առանց մեքենայի:

Տիկին Անուշը թե՛ մասնագիտությամբ, թե՛ բնույթով էներգետիկ է: ՀԷՑ-ում է աշխատել 6 տարի: «Էներգետիկի աշխատանքն ավարտելուց հետո անցնում էի վարորդի աշխատանքին: Վարում էի, որպեսզի կողմնակի եկամուտ ունենամ: Yandex-ը տալիս է այդ հնարավորությունը՝ որ ժամին ուզում ես, կարող ես մտնել երթուղի եւ երբ ուզում ես, կարող ես դուրս գալ», - ասում է նա:

Տիկին Անուշը երբեք առանց աշխատանքի չի մնացել: Ժամանակին հագուստի բիզնես էլ է ունեցել, բայց մեքենա վարելն է իր տարերքը:

Առաջին անգամ է էլեկտրամոբիլի ղեկին: Ասում է՝ շատ հարմարավետ է: «Այնքան հարմարավետ մեքենա է, որ անգամ չափսերն ինձ չխանգարեցին: Նախկինում հաճախ էր պատահում, որ հոգնում էի, կանգնում էի, նստարանը հետ տանում, որ մեջքս հանգստանար: Կամ իջնում, սուրճ էի խմում, որ թարմանայի: Իսկ հիմա բոլորովին դրա կարիքը չունեմ. մեքենան ինձ հաճույք է պատճառում, ոչ թե հոգնեցնում»,- ասում է Անուշը, ապա եռանդով իջնում մեքենայից, բացում դռները եւ հավելում՝ «ահա այսպես ամեն անգամ իջնում եմ, օգնում ուղեւորներին, հատկապես եթե իրեր են ունենում: Իհարկե, տղամարդիկ թույլ չեն տալիս, բայց կանանց միշտ աջակցում եմ»:

Տիկին Անուշը գոհ է իր վաստակած գումարից, հատկապես որ, ինչպես ինքն է ասում՝ կոպեկ առ կոպեկ եւ առանց որոպե ուշանալու նստում է հաշվին:

Շատերին է խորհուրդ տալիս միանալ Yandex Go-ին: Անգամ նրա դուստրն է մտածում հիմնական աշխատանքից հետո մեքենա վարել ու հավելյալ գումար աշխատել: Ինքն էլ սատարում է: Ասում է՝ երկու երեխա ունի, այդպես հոգսերը էականորեն կթեթեւանան:

«Հատկապես կանանց եմ խորհուրդ տալիս միանալ, որովհետեւ համոզված եմ՝ որքան շատ լինեն կին վարորդները, այնքան երթեւեկությունն ավելի լավը կլինի», - ամփոփում է տիկին Անուշը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ԻՆԵԿՈԲԱՆԿ». ԼԱՅՆԱԾԱՎԱԼ ԱՐՇԱՎ՝ ՄԵՎ ՈՒՐԲԱԹԻՆ

2025 թվականի նոյեմբերի 21-ից մինչեւ դեկտեմբերի 6-ը «Ինկեոբանկի» Mastercard քարտապանները հնարավորություն կունենան ստանալու 10-25% քեշբեք՝ գնումներ կատարելով միջազգային ամենապահանջված օնլայն հարթակներում:

Այս տարվա առաջարկների շրջանակը ավելի է ընդլայնվել. քարտապանները 25% քեշբեք կստանան Air France, Qatar Airways եւ Wizz Air ավիաընկերություններից օգտվելիս: Նույն չափի վերադարձ կհաշվարկվի նաեւ Adidas, Asos, Carters, iHerb, Nike, Sephora եւ Shein օնլայն խանութներում կատարվող գնումների համար:

Արշավին ընդգրկված է նաեւ AliExpress մարքեթփլեյսը, որի միջոցով կատարվող գնումները եւս հնարավորություն են տալիս ստանալու առավելագույն քեշբեքի տոկոսը:

Միեւնույն ժամանակ, Amazon, Ozon, Temu եւ Wildberries հարթակներում իրականացվող վճարումները կվերադարձվեն 10%-ի չափով:

Ամբողջ արշավի ընթացքում յուրաքանչյուր հաճախորդ կարող է ստանալ մինչեւ 25,000 ՀՀ դրամ քեշբեք:

Արշավին կարող են մասնակցել «Ինեկոբանկի» կողմից թողարկված բոլոր Mastercard Standard, Mastercard Standard Pension, Mastercard Gold եւ Mastercard World Black Edition քարտերը:

Այն հաճախորդները, ովքեր դեռ Mastercard չեն օգտագործում, կարող են օգտվել բանկի հատուկ առաջարկից. InecoMobile հավելվածով մինչեւ արշավի ավարտը պատվիրած Mastercard Standard քարտերը կտրամադրվեն անվճար:

Քեշբեքը կկուտակվի ամբողջ արշավի ընթացքում եւ մեկ միասնական վճարումով կփոխանցվի մինչեւ 2026 թվականի հունվարի 31-ը:

Արշավի ամբողջական պայմաններին, մասնակից հարթակների ցուցակին եւ հավելյալ տեղեկատվությանը կարող եք ծանոթանալ հետեւյալ հղումով՝ Սեւ Ուրբաթ + «Ինեկոբանկի» Mastercard = Մինչեւ 25% քեշբեք

Այս նախաձեռնությամբ «Ինեկոբանկը» շարունակում է ձեւավորել հաճախորդների համար առավել շահավետ գնումների մշակույթ՝ համատեղելով միջազգային բրենդերի լայն ընտրանին, բարձր քեշբեքի չափերը եւ ժամանակակից թվային լուծումները: Արդյունքում Սեւ Ուրբաթը դառնում է ավելի հարմարավետ եւ արդյունավետ բոլոր օգտատերերի համար:

ԿԱՐԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՆՈՐՀԻՎ ՆՎԱԳԱԽՈՒՄԲԸ ՀԱՄԱԼՐՎԵԼ Է 17 ՆՈՐ ԳՈՐԾԻՔՈՎ

Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբը 100 տարեկան է: Հոբելյանական տարվա առթիվ բարերար Կարեն Վարդանյանը նվագախմբին նվիրել է գերմանական, շվեյցարական, ֆրանսիական, անգլիական հայտնի ընկերությունների կողմից արտադրված 17 հատ երաժշտական նոր գործիք: Սա հնարավորություն կտա մի քանի տասնամյա պատմություն ունեցող հնամաշ գործիքները փոխարինել նորերով եւ բարձրորակ երաժշտական գործիքների շնորհիվ ստանալ պրոֆեսիոնալ հնչողություն: Եվրոպական վերջին սերնդի արտադրության 17 երաժշտական գործիքի ձեռք բերման համար բարերար Կարեն Վարդանյանը տրամադրել է 129 մլն դրամ:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

«ԱՅՆ, ՈՐ ԵՍ ԷԻ, ՈՐ ԻՄՆ ԷՐ ԱՌԱՋ, ԱՐԴԵՆ ՉԻ ՀԱՌՆԻ ԵՎ ՈՉ ՄԻ ԳՐՔՈՒՄ....»

ԱՅՍՕՐ ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐՆ Է

Յուրաքանչյուր տարվա նոյեմբերի 27-ին՝ Եղիշե Չարենցի մահվան օրը, չարենցասերները, գրականագետներն ու ղարզաղես նրա խոսքի նկատմամբ խոնարհում ունեցող մարդիկ այցելում են բանաստեղծի հուշարձանին: Հուշաքարի ոտդոպատե լռության տակ մարդիկ ծաղիկներ են դնում, բարձրաձայն կամ մտքերով կրկնում Չարենցի ամենասիրելի տողերը՝ մեկ անգամ ևս գիտակցելով նրա անհասանելի մեծությունը:

Այսօր լրանում է Եղիշե Չարենցի մահվան 88-րդ տարին, սակայն նրա անունը դարձյալ վերաիմաստավորվում է ժամանակի մեջ: Հայ մեծանուն գրող, հանճարեղ մտածող Եղիշե Չարենցը (Եղիշե Աբգարի Սողոմոնյան) ծնվել է 1897 թ. մարտի 13-ին Կարսում: Մանկուց գրել ու տպագրել է բանաստեղծություններ, միշտ առանձնացել է իր տաղանդով, ինքնօրինակ մտածողությամբ ու երբեմն էլ՝ հակասական, բայց հախուռն բնավորությամբ:

Չարենցի մասին բազմաթիվ հետաքրքիր դրվագներ են պատմվում: Միքայել Մազմանյանի վկայությամբ՝ դեռ դպրոցական տարիներին նա մի քանի ռուբլի էր հավաքել՝ Վահան Տերյանի ժողովածուն գնելու համար: «Զարմանալի հայտնություն եղավ ինձ համար այդ գիրքը,- պատմել է հետո Չարենցը,- այնպիսի կախարդական ազդեցություն ունեցավ ինձ վրա, որ մինչեւ օրս էլ առանց հուզմունքի չեմ կարողանում հիշել այդ»:

Նրա գրական կեղծանունի՝ «Չարենցի» ծագման մասին եւս գոյություն ունեն տարբեր վարկածներ: Ըստ մեկի՝նա վերցրել է իրենց քաղաք եկած Չարենց ազգանունով բժշկի անունը: Մյուսի համաձայն՝ մանկության չարաճճի վարքի պատճառով են նրան անվանել այդպես: Իսկ Վիվանի (Անուշավան Ջիդեջյան) պատմությամբ՝ նա պարզապես հայերենացրել է Պուշկինի «Անչար» բանաստեղծության վերնագիրը: Ավելի ուշ Չարենցը տվել է իր փիլիսոփայական բացատրությունը. «Ես իմ հոգու բարի բովանդակությանը, այսպես ասած, չար անուն եմ տվել»:

1930-ականների բռնապետական մթնոլորտը ծանր փորձություն դարձավ Չարենցի համար: 1935-ից սկսած՝ նրա նկատմամբ հալածանքները սաստկանում են. նրան հեռացնում են հրատարակչությունից, ապա՝գրողների միությունից: 1936-ի աշնանը նա գտնվում է տնային կալանքի տակ: Այդ օրերին, գրողների պատմելով, Չարենցը մի գիշերում գրել ու հաջորդ օրը պատռել է ավելի քան վեց տասնյակ քառյակ՝գիտակցելով իր գոյության անխուսափելի ողբերգությունը:

1937 թվականի նոյեմբերի 27-ի վաղ առավոտյան Կենտրոնական բանտի հիվանդանոցում, օրեր շարունակ տեւած ծանր վիճակից հետո, իր մահկանացուն է կնքել Եղիշե Չարենցը: Նա ընդամենը 40 տարեկան էր:

Չարենցն իսկապես մարգարեացել էր. մահից մի քանի ամիս առաջ գրած իր «Անվերնագիր» բանաստեղծության տողերում պոետը նկարագրել էր սեփական բացակայության ցավը՝մարդկանց մեջ իր անձը դարձնելով ավելի մոտիկ, ավելի հարազատ, քան երբեւէ:

Այսօր էլ՝ նրա մահվան 88-րդ տարելիցին, մարդիկ «իրար հայացքներում շարունակում են միեւնույն թախիծը կարդալ»: Չարենցը իր գրով, իր կյանքով եւ իր առեղծվածային ճակատագրով ապրում է ժողովրդի հիշողության մեջ:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

Անվերնագիր

Կնոջս եւ բարեկամիս՝Իզաբելլային

Իմ մահվան օրը կիջնի լռություն,
Ծանր կնստի քաղաքի վրա,
Ինչպես ամպ մթին կամ հին տրտմություն,
Կամ լուր աղետի՝թերթերում գրած:
Ծանոթ կնոջ պես այրի կամ դժբախտ,
Բարեկամուհու նման տխրատեսք,
Լուրը կշրջի փողոցները նախ,
Ապա կմտնի դուռ-դարպասից ներս...
Իբրեւ ծերունի մի թերթավաճառ՝
Հուշիկ քայլերով եւ համարյա կույր,
Կշրջի բոլոր տներն անպատճառ
Ու կհայտնվի ամեն մի բակում:
Ստվերի նման, սահած տնից-տուն,
Կկանգնի անտես հյուրի պես մռայլ,
Կկանգնի, ինչպես դժնի լռություն՝
Տարածված ամբողջ քաղաքի վրա:
Եվ համր մի պահ՝գիշերվա կեսին,
Բոլորի սրտում կկանգնի հանկարծ
Անհաղորդ, ինչպես հեռավոր լուսին,
Իմ դեմքը՝արդեն հավիտյան հանգած:
Եվ մարդիկ՝երեկ կյանքիս անծանոթ,
Եվ երբեք, երբեք դեմքս չտեսած,
Եվ մարդիկ՝միայն երբեմն ինձնով
Իրենց ֆանտաստիկ առասպելն հյուսած,
Եվ մարդիկ՝անգամ երգերիս անգետ,
Մարդիկ, որ թեեւ կյանքիս արձագանք՝
Մնացել են լոկ վկա անտարբեր
Եվ կարծել են, թե ես վաղո՛ւց չկամ,-
Այդ բոլոր մարդիկ իմ մահվան բոթից,
Որպես ընդհանուր աղետից սարսած՝
Զարմացած կզգան ինձ այնքան մոտիկ
Եվ հանկարծ այնքան թանկ ու հարազատ...
Եվ երկրում, ինչպես բարձրանա փոշի,
Եվ հոգիներում, ինչպես հուշ հառնի,-
Ելնելով անցած օրերիս նաշից,
Իմ ուրվականը պիտի սավառնի:
Եվ քաղաքներում, եւ գյուղերում խուլ,
Անցորդներն՝իրար անծանոթ անգամ,
Աչքերում իրար եւ հայացքներում
Պիտի միեւնույն թախիծը կարդան...
Եվ դեմքով տխուր եւ լուռ աչքերով
Պիտի միեւնույն սուգը հաղորդեն,
Երգերիս հանդեպ անսահման ներող,
Մոռացած բոլոր հանցանքներս արդեն...
Կբանան ոմանք իմ գիրքը գուցե,
Կթերթեն դանդաղ, կկարդան տողեր,
Տարտամ շարժումով գիրքը կգոցեն,
Եվ թախիծը խոր հուշս կողողե:
Եվ գուցե միայն սենյակում մի խուլ,
Գլուխը թեքած պատկերիս վրա՝
Կնայի մի կին աչքերիս տխուր,
Եվ կարցունքոտվեն աչքերը նրա: -

. . . . . .

Եվ ինչպես կյանքում՝տարիներ առաջ,
Հուշերում հանկարծ անցյալը բուրի,
Երազանքներում գուցե իմ անցած
Եվ արդ իմ հառնած գրքում հուշերի...
Այն, որ ես էի, որ ի՛մն էր առաջ,
Արդեն չի հառնի եւ ոչ մի գրքում
Եվ ո՛չ մի գրքում՝աշխարհում գրած,
Եվ ո՛չ մի գրքում, եւ ո՛չ մի գրքում...

ԾԱՆՈԹԱՑԵԼ Է ԹԱՏՐՈՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանն այցելել է Կ. Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական թատրոն եւ Սոս Սարգսյանի անվան համազգային թատրոն՝ ծանոթանալու նորոգման եւ բարեկարգման ընթացիկ աշխատանքներին:

ԿԳՄՍ նախարարությունից հայտնում են, որ Կ. Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական թատրոնում նախարարի տեղակալը թատրոնի տնօրեն Սուրեն Շահվերդյանի ուղեկցությամբ շրջայց է կատարել թատրոնում եւ ծանոթացել դահլիճի վերանորոգման աշխատանքներին: Թատրոնի տնօրենը ներկայացրել է ընթացիկ աշխատանքները՝ ընդգծելով, որ շուտով պատրաստ կլինի նոր դահլիճը, որն ապահովված կլինի նոր աթոռներով: Փոխվել է նաեւ պատերի գույնը, ինչը որակապես նոր միջավայր է ստեղծում հանդիսատեսի համար, ինչպես նաեւ կբացվեն մի քանի նոր հարթակներ՝ հնարավորություն ստեղծելով կազմակերպելու տարբեր ձեւաչափերով ներկայացումներ: ԿԳՄՍ նախարարի տեղակալն այնուհետեւ ծանոթացել է Սոս Սարգսյանի անվան համազգային թատրոնի շենքի՝ ավարտական փուլում գտնվող աշխատանքներին: Թատրոնի տնօրեն Ղուկաս Մադոյանի ուղեկցությամբ նա շրջել է թատրոնի նորակառույց շենքում, ծանոթացել կահավորման եւ նոր սարքավորումներով հագեցման վերջին փուլի աշխատանքներին: Թատրոնի նոր դահլիճը, որը նախատեսված է 230-240 հանդիսականի համար, ամբողջությամբ հագեցած է ԿԳՄՍ նախարարության տրամադրած վերջին սերնդի լուսաձայնային տեխնիկայով: Նախարարության աջակցությամբ ձեռք են բերվել նաեւ դահլիճի նոր նստատեղերը եւ դերասանական հանդերձասենյակների կահավորանքը:

Թատրոնի մի շարք այլ հատվածների կահավորման, ինչպես նաեւ հատուկ բեմական համակարգի ձեռքբերման աշխատանքները հնարավոր են դարձել մասնավոր հատվածի ներդրումներով: Շուտով Սոս Սարգսյանի անվան համազգային թատրոնը կրկին կհյուրընկալի իր հանդիսատեսին:

Թատրոնի բացումից անմիջապես հետո հանդիսատեսին հնարավորություն կընձեռվի վայելելու երեք պրեմիերա՝ «Պենելոպե, օ՜ Պենելոպե», բեմադրությունը՝ Սիմոն Աբգարյանի, «Սուրբ Անտոնիոսի հրաշքը», բեմադրությունը՝ Նարինե Գրիգորյանի, «Քարը», բեմադրությունը՝ Անդրանիկ Միքայելյանի:

IDBank

ԲԱՆԿԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԻՆՆԵՍԱ ԱՄԻՐԲԵԿՅԱՆԸ՝ ICC–Ի ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀ

IDBank-ի ֆինանսական ինստիտուտների վարչության ղեկավար Իննեսա Ամիրբեկյանը նշանակվել է Առեւտրի միջազգային պալատի (International Chamber of Commerce, ICC)՝ Բանկային հանձնաժողովի Երաշխիքների հարցերով Աշխատանքային խմբի (URDG 758) համանախագահ: Այս աշխատանքային խումբը առանցքային դեր ունի բանկային երաշխիքների միջազգային պրակտիկայի ձեւավորման մեջ. այն ապահովում է URDG 758 միասնական կանոնների ճիշտ եւ ժամանակակից կիրառումը, տրամադրում է մասնագիտական ուղեցույցներ միջազգային գործարքներում, ինչպես նաեւ մասնակցում երաշխիքների միջազգային ստանդարտների կատարելագործմանը եւ գործընթացների թվայնացմանը՝ նպաստելով ավելի ապահով եւ արդյունավետ միջավայրի ձեւավորմանը:

Իննեսա Ամիրբեկյանը նշել է. «Պատիվ է ստանձնել համանախագահի պաշտոնը եւ համագործակցել ոլորտի առաջատար մասնագետների հետ, այդ թվում՝ Անդրեա Հաուպտմանի, որը երկար տարիներ ղեկավարել է աշխատանքային խումբը եւ ձեւավորել է ժամանակակից երաշխիքային պրակտիկան: IDBank-ը ներկայացնելը այս հարթակում եւ՛ մեծ հնարավորություն է, եւ՛ պատասխանատվություն: Կշարունակեմ աջակցել երաշխիքների հստակությանը, միասնական կիրառմանը եւ ոլորտի թվայնացման առաջընթացին:

IDBank-ի Վարչության նախագահ Միեր Աբրահամյանի խոսքով՝ այս նշանակումը ոչ միայն ընդգծում է Իննեսա Ամիրբեկյանի մասնագիտական ներուժը, այլ նաեւ շեշտադրում IDBank-ի աճող դերը միջազգային համագործակցության դաշտում եւ հաստատում Բանկի հանձնառությունը՝ շարունակել գործել համահունչ առեւտրի ֆինանսավորման ոլորտի գլոբալ լավագույն փորձին:

Ընդհանուր առմամբ, այս նշանակումը հնարավորություն է տալիս ավելի լայն միջազգային հարթակներում ներկայացնելու տարածաշրջանի մասնագիտական փորձը եւ մասնակցելու գլոբալ ստանդարտների ձեւավորմանը: Այն բարձրացնում է վստահությունն IDBank-ի նկատմամբ եւ միջազգային միջավայրում առավել տեսանելի է դարձնում Հայաստանի ֆինանսական ոլորտում կիրառվող ժամանակակից ու մրցունակ մոտեցումները:

Բանկը վերահսկվում է
ՀՀ ԿԲ կողմից

● *Դեկտեմբերի 2-ին՝19:30-ին, Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի կունենա «25-րդ ժամը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3.000, 4.000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ուսուցիչների կամավոր ատեստավորմանը մասնակցելու համար դարտադի՞ր է լինել գործող ուսուցիչ, թե՞ հայտ կարող են լրացնել նաեւ ուսուցիչ չաշխատող անձինք:

Աննա Մանուչարյան (36 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ա. Մանուչարյանի հարցին ի պատասխան հայտնում ենք՝ մինչեւ երեք տարեկան երեխայի խնամքի համար արձակուրդում գտնվող ուսուցիչները, ինչպես նաեւ համապատասխան կարգով սահմանված առարկաների մասնագիտական կրթություն ունեցող ուսուցիչ չաշխատող անձինք կամավոր ատեստավորման դիմելու համար պետք է իրականացնեն ստորեւ ներկայացված քայլերը.

- կամավոր ատեստավորման դիմելու համար պետք է օգտվեն at.emis.am համակարգից,
- գրանցվեն, ակտիվացնեն հարթակում հաշիվ,
- մուտքագրեն անհրաժեշտ տվյալները, որից հետո սեղմեն «Հաստատել տվյալները» կոճակը. կբացվի էջ, որտեղ կառաջարկվի ընտրել երեք տարբերակներից մեկը, որտեղ ուսուցիչ չաշխատող անձը պետք է ընտրի «Տվյալ պահին չեմ աշխատում» տարբերակը,
- հաջորդիվ պետք է ընտրեն այն մասնագիտությունը, որից ցանկանում են անցնել կամավոր ատեստավորում, եւ սեղմեն «հաստատել»՝ հայտը ուղարկելու համար:

ՀՀ ԿԳՄՍ նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նախնական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում հանրակրթական առարկաներ դասավանդող մասնագետները կամավոր ատեստավորման են դիմում ուսուցիչ չաշխատող անձանց համար նախատեսված տարբերակով:

ԷՋԸ՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ, թե ինչ հերթականությամբ են հաշվարկվում երաշխավորված ավանդները:

Ամալյա Հարությունյան (60 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Երաշխավորված ավանդի հատուցման ենթակա գումարը հաշվարկելիս առաջին հերթին հաշվարկվում են դրամային ավանդները, իսկ երկրորդ հերթին՝ արտարժութային ավանդները: Ընդ որում առաջին հերթին հաշվարկվում են ավանդների հիմնական գումարները (ավանդատուի կամ երրորդ անձի կողմից հօգուտ ավանդատուի բանկին տրամադրված կամ բանկում առկա դրամական գումարը, որը ենթակա է վճարման ավանդատուին, ավանդատուի բանկում բացված հաշիվների վրա գտնվող դրամական միջոցները եւ բանկի թողարկած անվանական արժեթղթերով ներգրավված դրամական միջոցները), իսկ երկրորդ հերթին՝ վերը նշված դրամական միջոցների վրա հաշվարկված տոկոսների գումարները:

Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Եթե ավանդատուն անվճարունակ բանկի նկատմամբ ունի խնդրահարույց պարտավորություն, ապա հատուցման ենթակա գումարը հաշվարկվում է բանկային ավանդի եւ խնդրահարույց պարտավորության հաշվարկված դրական պարտավորության հիման վրա:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Ազգային ժողովում

Երեկ ԱԺ-ում տեղի էին ունենում խորհրդարանական լսումներ՝ «Հայաստանի Հանրապետությունում առկա քաղբանտարկյալների եւ նրանց խախտված իրավունքների վերականգնման մասին» ԱԺ ընդդիմադիր խմբակցությունների ներկայացրած հայտարարության նախագծի վերաբերյալ:

ԱԺ-ի՝ պատգամավորների համար նախատեսված նստարանների սեղաններին, ի պաշտպանություն քաղբանտարկյալների, տեղադրված էին վերջիններիս լուսանկարները:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի
ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	- 5 - 10 + 8 + 12
Կոտայքի լեռներ	- 3 - 7 + 8 + 12
Կոտայքի նախալեռներ	0 - 3 +10 + 13
Գեղարքունիք	- 4 - 9 + 9 + 13
Լոռի	- 2 - 7 +13 + 15
Տավուշ	0 + 4 +15 + 18
Արագածոտնի լեռներ	- 6 - 10 + 7 + 11
Արագածոտնի նախալեռներ	- 3 + 1 + 11 + 14

Արարատ	- 2 - 5 +13 + 15
Արմավիր	- 2 - 6 +13 + 15
Վայոց ձորի լեռներ	- 4 - 7 + 8 + 11
Վայոց ձորի նախալեռներ	- 1 - 4 +12 + 15
Սյունիքի նախալեռներ	- 1 - 6 +14 + 17
Սյունիքի հովիտներ	+ 1 + 4 +17 + 20
ԼՂՀ	+ 1 + 3 +13 + 17
Երեւան	0 - 2 +12 + 14

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **26.11.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*